«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ *Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը ոչ ավանդական նկարչության գործընթացում*

Հաստատություն՝ *<<Աշտարակ համայնքի թիվ 2 Արևիկ մանկապարտեզ>> ՀՈԱԿ*

Դաստիարակ՝ *Նունե Փիլումյան*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ 1 Սաների մեջ ինքնուրույնության նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում 5

1.1 Նախադպրոցական գեղագիտական դաստիարակությունը կերպարվեստային պարապմունքներին 5

1.2 Նկարչական պարապմունքների տեսակները 7

Գլուխ 2 Կերպարվեստային պարապմունքների ժամանակակից մոտեցումներ..... 14

2.1 Մանկական նկարչության զարգացման փուլերը …….. 14

2.2 Ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչություն 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 21

Օգտագործված գրականության ցանկ ……...23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կերպարվեստային գործունեությոունը արվեստի մի տեսակ է, որը զարգացնում է երեխաների գեղագիտական ճաշակը և ընկալումները, սովորեցնում նկատել շրջապատող աշխարհի գեղեցկությունը:

Առարկաների և երևույթների ընկալման ժամանակ զարգացնում մտածողական գործողությունների վերլուծություն, համեմատություն, նմանություն, առանձին առարկաների և դրանց մասերի նմանության, ընդհանուրի և եզակիի առանձնացում և ընդհանրացում: Զարգացնում բնության երևույթները և առարկաները դիտելու, լսելու ունակությունը, նկատելու դրանց փոփոխությունը:

Կերպարվեստային գործունեության տեսակներից է նկարչությունը:

Նախադպրոցականի համար նկարչությունը նույնքան բնական պահանջմունք է, որքան խաղը: Նկարչությունը ոչ միայն փոքրիկի զգացմունքի արտահայտումն է, այլև միջոց ճանաչելու շրջապատը: Միաժամանակ նկարչությունը կատարում է նաև զարգացնող դեր՝ հարստացնելով և ճշգրտելով երեխայի աշխարհընկալումը:

Սովորեցնելով երեխային նկարել, չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից, այլ պետք է նպաստել երեխայի մոտ ազատ ու ստեղծագործ աշխարհընկալման ձևավորմանը:

Նկարչության բուն գործընթացը, թղթի վրա պատկերելու միջոցով, երեխայի սիրո, հակումների, հույզերի և տրամադրության արտացոլումն է: Այն ձերբազատում է երեխային լարվածությունից և հանդարտություն պարգևում:

Ձևավորելով պատկերցումներ նոր գույների ստացման վերաբերյալ, սովորեցնում է գույների խառնուրդից նոր գույների և գուներանգների ստացման հնարները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ կարևորվում է նախադպրոցական տարիքի սաների գեղագիտական դաստիարակության հարցը,

հատկապես կերպարվեստային պարապմունքերում այլընտրանքային, կամ ոչ ավանդական նկարչության գործընթացը։

Թեմայի նպատակը

- Սաների մեջ զարգացնել գեղագիտական ընկալման, գեղագիտական ճաշակի իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզազգայական վերաբերմունք
- Զարգացնել սաների գեղարվեստաստեղծագործական ունակությունները
- Արթնացնել նրանց մեջ սեր դեպի կերպարվեստային գործունեությունը

Թեմայի խնդիրները

- Զարգացնել գեղագիտական զգացողությունը, երևակայությունը, առարկաները դիտելու և հետազոտելու կարողությունները
- Զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ, տարբեր արտահայտամիջոցներով միևնույն ձևը, կամ կերպարը վերարտադրելու ունակությունները
- Սովորեցնել տարբեր նյութերով բազմամաս կոմպոզիցիա ստանալու ձևերն ու եղանակները։
- Սաների համար ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր, ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զբաղվելու համար։
- Ընդլայնել և զարգացնել պատկերացումները կենցաղի, տրանսպորտի, մրգերի, բանջարեղենների, ծաղիկների, ծառերի կենդանիների, բնության երևույթների, ինչպես նաև տոների ու նշանակալից իրադարձությունների վերաբերյալ։
- Երեխաների ուշադրությունը հրավիրել տարբեր առարկաներին բնորոշ հատկությունների՝ դրանց ձևերի, ուրվագծի, առանձին մասերի, գույների, նախշերի և գեղարվեստական արտահայտչականության վրա։

Գլուխ 1. Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացում

1.1 Նախադպրոցականի գեղագիտական դաստիարակությունը կերպարվեստային պարապմունքներին։

Ժամանակակից մանկավարժությունը իր անհատկողմնորոշիչ դիրքորոշումներով ուղղված է յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը։ Կրթական գործընթացը կառուցվում է անձի ստեղծագործական ընդհունակությունների և կարողությունների դրսևորման համար՝ օպտիմալ մանկավարժական պայմանների ապահովման սկզբունքով և հեռանկարում ակնկալում է նորցված հասարակության կայացում։ Կրթության ամբողջական համակարգում իր կայուն տեղն է զբաղեցնում գեղագիտական դաստիարակությունը։ Այն նախադպրոցական տարիքում պետք է ուղղված լինի երեխայի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ընդհունակությունների զարգացմանը։

Ստեղծագործող անձնավորությանը բնորոշ է կյանքի ակտիվ դիրքորոշում, գեղեցիկն ընկալելու, զգալու և գնահատելու ընդհունակություն, ինչպես նաև գեղեցիկի գաղափարով առաջնորդվելու ցանկություն և կարողություն։ Գեղագիտական դաստիրարակության հիմքում ընկած է հուզազգացմունքային ոլորտի զարգացումը, որն առավել բուռն ընդհանում է վաղ և նախադպրոցական տարիքում։

Նախադրոցական տարիքի երեխաների դաստիարակության համակարգում իր բացառիկ կարևորությունն ունի գեղագիտական դաստիարակությունը։

Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության, բացահայտում է երեխայի ընդհունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ: Նախադպրոցական տարիքի երեխան նման է ամբողջական մի զգայարանի՝ ընկալում և զգում է ամեն մանրուք, նա կարծես միշտ պատրաստ է արձագանքելու և հուզականությամբ մասնակցելու աշխարհի իրադարձություններին: Երեխան ընկալում է աշխարհը տպավորությունների և կերպարների միջոցով: Հուզական տպավորություններն ու ապրումներն խոր հետք են թողում երեխայի կյանքում և երբեք չեն մոռացվում: Հ. Յ. Լերները, ուսումնասիրելով նախադպրոցականի ստեղծագործական ընդհունակությունների դրսևորման եղանակները, առանձնացնում է ստեղծագործական գործունեության զարգացման երեք փուլ, որոնք բնութագրում են միաժամանակ նախադպրոցական երեխայի ստեղծագործելու և՛ ընթացքը, և՛ մեխանիզմները:[1]

Առաջին փուլը Լերները անվանում է մտահաղացման ձևավորման փուլ: Ստեղծագործելու մտահաղացումն առաջանում է աստիճանաբար կուտակվող և հարստացող հուզազգացմունքային ոլորտի և ձևավորվող հուզական տպավորությունների հիման վրա, որոնք երեխայի մեջ ձևավորում են որոշակի կերպարային պատկերացումներ, դրանք ամրապնդվում են գեղագիտական փորձով և երեխան փորձում է այդ ամենը անհապաղ որևէ կերպ վերարտադրել: Կրտսեր նախադպրոցական տարիքում ստեղծագործելու մտահաղացումն իրադրային է, պայմանավորված անսպասելի ակնթարթային տպավորություններով, այն արտահայտվում է հիմնականում նկարելու ցանկությամբ: Ավագ նախադպրոցական տարիքում մտահաղացումն ավելի կայուն բնույթ է, այն կարող է արտացոլվել գեղարվեստական գործունեության տարբեր ձևերում: Երեխան ընդհունակ է ստեղծագործելու կերպարվեստի

[1] Ս. Ա. Մարության, Ա. Ս. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Բուհական դասագիրք, էջ 203

միջոցով, գեղարվեստական խոսքի, երգարվեստի և պարարվեստի օգնությամբ, իսկ հաճախ մի քանի ձևերով միաժամանակ։

Հաջորդ փուլը ըստ Լերների, կերպարի ստեղծման փուլն է, որի ընթացքում երեխան <<կառուցում>> է իր մտահաղացումը։ Նշված գործընթացին բնորոշ են հետաքրքիր լուծումներ՝ այլընտրանքային մոտեցումներ (օրինակ կապույտ նարինջ) չափերի ընդգծված շեղումներ, երևակայական տարբեր անհավանական լրացումներ (օրինակ երեք ականջավոր նապաստակ)։ Սովորաբար, երեխան իր ստեղծագործական մտահաղացումն արտահայտում է գունային երանգավորմամբ, հորինված գրոտեսկային կերպարներով, հեքիաթային հերոսների յուրովի պատկերմամբ և բոլորովին անհավանական անսովոր կերպարներով՝ հասկանալի միայն երեխայի կողմից։

Երրորդ փուլում՝ ստեղծագործության վերլուծության փուլն է, որի ընթացքում երեխան պատրաստակամ և ամենայն պատասխանատվությամբ նկարագրում է սեփական ստեղծագործությունը, բացատրում մտահաղացման իրականացման եղանակները, արտահայտիչ միջոցների ընտրությունը։

Գեղարվեստական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում պետք է ուղղված լինի երեխայի ստեղծագործելու ցանկության խթանմանը և ստեղծագործական ընդհունակությունների զարգացմանը։ Տպավորություններով և կերպարային պատկերացումներով հարուստ ստեղծագործող երեխայի ձևավորումը նախադպրոցականի գեղագիտագեղարվեստական դաստիրակության հիմնական իմաստն է և գերնպատակը։

1.2 Նկարչության պարապմունքի տեսակները։

Առարկայական նկարչություն։ Միջին խմբում նկարչությունը կարելի է դիտել որպես ինքնատիպ խաղ։ Դա է պատճառը, որ սովորեցնելով երեխային նկարել, չպետք է նրան զրկել ինքնուրույնությունից, այլ նպաստել ազատ ու ստեղծագործ աշխարհընկալման ձևավորմանը։

Այս խմբում մինչև նկարել սկսելը երեխան պետք է խաղա նկարվող առարկայով, ձեռքը վերցնի, շոշափի այն, ըմբռնի դրա ամբողջական բնույթը: Այս դեպքում երեխայի պատկերացումներն այնքան հզոր կլինեն, որ նկարիչն անգամ կարող է <<նախանձել>> նրան:

Նկարչության բուն գործընթացը, թղթի վրա պատկերելու միջոցով, երեխայի սիրո հակումների ու հույզերի արտացոլումն է: Նկարչական պարապմունքների բովանդակությունը միջին խմբում կրտսեր երկրորդ խմբի համեմատությամբ փոքր ինչ բարդանում է: Միջին խմբում պահանջվում է գծերի տեսակների, գույնի, ձևի միջոցով ստանալ ավելի բարդ և լիարժեք պատկերներ թղթի վրա, երեխային մոտեցնել ձևի ճիշտ ընկալմանը և նպաստել ձեռքի վարժ շարժումների զարգացմանը:

Այս խմբի երեխաների մեջ շարունակել ձևավորել առանձին առարկաներ նկարելու հմտություններ, և այդ առարկաների պատկերները կրկնելով ու դրանց ավելացնելով այլ պատկերներ ստանալ թեմատիկ կոմպոզիցիաներ:

Առարկայական նկարչության կարևոր առանձնահատկություններից է առարկայի պատկերումը մոտավոր ճշտությամբ: Առարկայական նկարչության ուսուցումը հիմնվում է նախնական դիտումների վրա, նպատակն է երեխաների մեջ ձևավորել ճիշտ պատկերացում առարկայի ձևի, կառուցվածքի, չափի, գույնի և այլ հատկանիշների վերաբերյալ: Այսինքն բնօրինակից նկարելը համարվում է դիտողական ուսուցման ձև, որի ժամանակ երեխայի գիտակ-ցության մեջ մտապահվում են առարկայի ձևը, կառուցվածքը և գույնը:

Բնօրինակից նկարչությունը նկարելու ամենաբարդ տեսակն է: Այն հիմնվում է բավարար զարգացած աչքաչափի վրա: Որպես բնօրինակ օգտագործվող նմուշը պետք է տեղադրվի երեխաներին որքան հնարավոր է մոտ, և բնօրինակի վերլուծությունը անցկացվի պարապմունքից առաջ: Խիստ կարևոր է, որ երեխաներն աշխատելուց հետո կարողանան համեմատել իրենց աշխատանքն բնօրինակի հետ, գտնել դրական կողմերն ու թերությունները: Առարկայական նկարչությունն ունի երեխաներին նկարչական գիտելիքներով և հմտություններով զինելու լայն հնարավորություններ: Առարկայական

նկարչության ժամանակ երեխաներն պատկերում են պարզ ձև ունեցող առարկաներ, նրանք ուշադիր դիտում են տերևները, ծաղիկները, թիթեռները, մրգերը, բանջարեղենները, խաղալիքները, գավաթները, պնակները և այլն, ձգտում ճիշտ ըմբռնել առարկայի ձևը, կառուցվածքը, բնորոշ գծերը և գույնը։

Առարկայական նկարչությունը դիտողական ուսուցման ձև է և հիանալի արդյունք է տալիս երեխաների ընդհանուր զարգացման գործը։ Նրանք համեմատում են առարկաները, գտնում նմանություն-ներ, տարբերություններ։

Զբոսանքի ժամանակ գտնել նմանություններ և տարբերություններ դիտվող առարկաների տարբերությունը՝ մեծ և փոքր շուն ու կատու։ Աշնան ամիսներին նկարել աշնանային բնություն իր հարուստ գույներով։ Նկարել տարբեր մեծության ծառեր, թփեր, գտնել նրանց նմանությունն ու տարբերությունը։ Երեխաներին հիշեցնել, որ առարկաներն սկզբից թղթի վրա տեղադրեն և նկարեն հասարակ սև մատիտով։ Ծանոթացնել և հիշեցնել, որ գույնը վերցնեն շատ բաց թափանցիկ հետո ստիճանաբար մգացնեն։ Երեխաները պետք է ճանաչեն տաք (կարմիր, դեղին, նարնջագույն) և սառը (մոխրագույն, բաց երկնագույն, կանաչ) գույները։ Զբոսանքի ժամանակ դիտեն ծառերը, հավաքեն տարբեր տերևներ, պարզել դրանց գույնը և ձևը։ Ձևավորել նկարելու հմտություններ՝ զարգացնելով մանր մոտորիկան։

Պարապմունքներն արդյունավետ և նպատակային անցկացնելու համար անհրաժեշտ է, որ դաստիարակը նախապատրաստվի և ունենա տարբեր չափի և գույնի նկատվող խաղալիք առարկաներ։

Ստեղծագործական կամ թեմատիկ նկարչություն. Թեմատիկ նկարչությունը երեխաներին սովորեցնում է նկարել ոչ առարկա, այլ վրձնի և ներկի օգնությամբ ստեղծել սյուժետային թեմա (մի քանի առարկաներ, պատկերներ)։ Դրա շնորհիվ երեխաներն ձեռք են բերում նոր ունակություններ և հմտություններ՝ կողմնորոշվել թղթի վրա, պատկերել մի քանի կերպար և դուրս չգալ թղթի սահմաններից, միաժամանակ օգտվել տարբեր գույներից և այլն։ Բնականաբար այս տարիքում ընտրված թեմաները պետք է լինեն շատ պարզ և անհարժեշտության դեպքում ունենան նմուշ օրինակներ, որոնք սակայն

նկատելու ընթացքում չպետք է լինեն երեխաների տեսադաշտում: Նկարչության այս եղանակով աշխատելու ժամանակ երեխաներն աստիճանաբար սովորում են, որ մոտ կանգնած տնակն ու ծառը ավելի մեծ են և բարձր, իսկ հեռվում կանգնածներն՝ փոքր: Թեմատիկ նկարչության ժամանակ թեմաները պետք է բխեն երեխաների՝ նախկինում ձեռք բերած գիտելիքներից, տեղեկատվությունից, ծանոթ հեքիաթներից և մուլտֆիլմներից:[2]

Նույն նպատակը դրվում է նաև ստեղծագործական նկարչության դեպքում, միայն այս պարագայում ավելանում է նաև երեխայի երևակայությունը, ստեղծագործական միտքը:

Թեմատիկ ստեղծագործական աշխատանքները կատարելուց առաջ երեխաները դիտում են շրջապատող միջավայրի երևույթները, փոփոխությունները և ստացած տպավորությունների հիման վրա կատարում զանազան թեմաներով նկարներ: Նկարները կարող են կատարել գրական ստեղծագործությունների, խաղերի, երգերի թեմա-ներով: Թեմատիկ աշխատանքներ կատարելիս զարգանում են երեխաների տեսողական հիշողությունը, կերպարային մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը և սեփական մտահաղացումը վերարտադրելու կարողությունները: Թեմատիկ և մյուս նկարչության հաջողությունը կախված է պարապմունքների ճիշտ կազմակերպումից: Դաստիարակը պետք է անցկացնի թեմային համապատասխան զրույց, ցուցադրի նկարներ, խաղալիքներ, երեխաների միջոցով տիկնիկային թատրոն, բնական նյութերից հեքիաթների հերոսների պատրաստում և այլն:

Երեխաները նկարելիս աշխատում են գտնել հանձնարարված թեմայի բովանդակությանը համապատասխանող ամենաարտահայտիչ կոմպոզիցիոն լուծումներ: Դիտում, ուսումնասիրում են շրջապատող առարկաներն ու երևույթները իրենց ձևով, համաչափություններով, գույներով <<հեռու>>, <<մոտիկ>> հասկացություններով, երկինք-գետին հարաբերություններով:

[2] Լ. Սմբատյան, Լ. Վարդանյան, Լ. Սարգսյան <<Կերպարվեստի պարապմունքներ>>, Կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար, Ուսումնամեթոդական ձեռնարկ

Թեմատիկ աշխատանքներ կատարելու ժամանակ երեխաները տեղեկանում են այս կամ այն տոնի ստեղծման պատմությանը: Ազգային տոների, դրոշի, զինանշանի մասին պատմելով դաստիարակը օգնում է երեխաներին դրանք ներմուծել թեմատիկ աշխատանքներ: Նկարելու ժամանակ երեխաները պետք է կարողանան օգտագործել ամբողջ թղթի մակերեսը, առարկաները տեղադրեն համաչափորեն, գույները և երանգները ճիշտ ընտրեն: Այս խմբում դաստիարակը մեծ ուշադրություն պետք է դարձնի տեխնիկական ունակություններին:

Դեկորտիվ նկարչություն: Գեղագիտական դաստիարակության իրականացման ձևերից մեկը դեկորատիվ նկարչությունն է, որի միջոցով լուծվում են մի շարք խնդիրներ:

- երեխաները յուրացնում են դեկորատիվ նախշերի պատկերման տարբեր եղանակների պարզագույն տարրեր
- սովորեցնում են դրանք ճիշտ տեղադրել թղթի վրա
- հետաքրքրություն է ձևավորվում կիրառական արվեստի նմուշների նկատմամբ
- զարգացնում է երեխաների ճաշակը:

Դեկորատիվ նկարչության խնդիրն է երեխաներին ծանոթացնել ազգային դեկորատիվ կիրառական արվեստի հիմնական սկզբունքներին, սովորեցնել նախշեր ուղղանկյան, շերտիկի, քառակուսու, շրջանի, եռանկյան մեջ, ծանոթացնել նախշի հերթականության կոմպոզիցիոն կատարմանը, զարգացնել աշխատանքի կատրման տեխնիկական ունակություններ: Դաստիարակը օգնում է երեխաներին հասկանալ նախշի գեղեցկությունը, որը նկատվում է տվյալ առարկային համապատասխան: Ուսումնասիրելով նմուշները սկսում են հասկանալ տարբեր գույների և ձևերի համատեղման գեղեցկությունը, նրանք հիանում են այդ գեղեցիկ նմուշներով:

Դեկորատիվ նկարչության միջոցով զարգանում են երեխայի ստեղծագործական ունակությունները, կարողությունները, գեղագիտական ճաշակը։

Դեկորտիվ նախշեր ստեղծագործելու աշխատանքում երեխաներին օգնում են երկրաչափական պատկերները՝ եռանկյունի, շրջան, քառակուսի, ձվածիր, ուղանկյունի և այլն։

Նկարելու միջոցով պարզել երկրաչափական պատկերների տարբերությունները։ Դրանից հետո առաջարկել իրենց ցանկությամբ ձևավորել։

Ժողովրդական դեկորատիվ արվեստի հետ ծանոթացումը պետք է կատարել աստիճանաբար և հետևողական առանձնացնելով տեսակները։ Առաջին պարապմունքների ժամանակ նախշը կատարվում է զոլերի մեջ՝ պարզ ծաղիկներով և տերևներով։ Սկզբում նկարվում է ծաղիկի կենտրոնը, որից հետո թերթիկները՝ մուգ կամ բաց գույներով, իսկ տերևները ծաղիկի աջ և ձախ կողմերում։ Նույն ծաղիկի թերթիկները պետք է նկարել տարբեր գույներով։

Հաջորդ պարապմունքին երեխաները արդեն իրենք են ընտրում նախշը, գույնը՝ նկարվող առարկային համապատասխան։

Նման ձևով տարված աշխատանքներն տալիս են իրենց դրական արդյունքները։ Հետո արդեն անհրաժեշտ է ծանոթացնել հիմնական (կարմիր, կապույտ, դեղին) և լրացուցիչ գույների հետ։ Լրացուցիչ գույներ ստացվում են հիմանական գույների խառնուրդից (կարմիր + դեղին = նարնջագույն)։ Երեխաների մեջ պետք է մշակվի տեխնիկական ունակություններ տարբեր նյութերով աշխատելու համար։

Գրաֆիկական աշխատանք կատարելիս պետք է աշխատել հասարակ սև մատիտով՝ առանց ուժեղ սեղմելու, ստանալ առարկայի ձև(ծավալը)՝ բնականին նման։ Նկարելու ժամանակ պետք չէ անցնել մատիտով գծած սահմանը։ Մատիտով պետք է աշխատել շատ թույլ, որպեսզի գույնի տակից տեսանելի չլինի։

Տարեվերջում այս տարիքի երեխաները պետք է գույներով ստանան առարկայի ձևը, կարողանան նկարել ֆոնը և առարկայի ընկած ստվերը մուգ գույնով:

Մատիտով աշատելու ժամանակ փոխել ձեռքի շարժումը ուղիղ, թեք, կոր: Երեխաների համար դա հեշտ չէ, նրանք նկարելու ընթաց-քում աշխատում են թուղթը շրջել, որպեսզի հեշտ նկարեն, որը ճիշտ չէ: Դաստիարակի անընդհատ ուշադրությունը հնարավորություն է տալիս աստիճանաբար մշակելու ձեռքի տարբեր ուղղություններով շարժումները:

Այս բոլորի հետ մեկտեղ զարգանում են երեխայի ձեռքի և աչքի կորդինացված շարժումները, որը դպրոցում շատ անհրաժեշտ է գրելու համար:

Այս տարիքում երեխաները պետք է աշխատեն տարբեր ուղղություններով պատկերել նկարվող առարկայի ձևը, տարածության մեջ ճիշտ տեղադրել առարկայի մասերի համաչափությունը:

Տարածության մեջ գտնվող առարկաները երեխաները նկարում են ձեռքի ազատ և համարձակ շարժումներով, որպեսզի նկարը ստացվի գեղեցիկ, գունեղ և դուր գա բոլորին: Երբ մշակվում է երեխայի ձեռքի համարձակ շարժումը, այն դառնում է սովորական լսող իր մտահաղացումներին: Նա կարողանում է նկարում պատկերել տարբեր առարկաներ շրջապատող կյանքից, իր մտքերը արտահայտել, զարգանում են նրա ստեղծագործական ունակությունները, իսկ եթե երեխայի ձեռքը դեռ լիարժեք բացված չէ, նա դառնում է կաշկանդված, չի ուզում աշխատել, կերպարվեստային գործունեությունը դառնում է անհետաքրքիր: Նման երեխաների հետ հարկավոր է տանել անհատական աշխատանք, որը հնարավորություն կտա փոխելու իրենց մոտեցումները կերպարվեստային գործունեության նկատմամբ:

Գլուխ 2. Կերպարվեստային պարապմունքների ժամանակակից մոտեցումներ

2.1 Մանկական նկարչության զարգացման փուլերը։

Մանկական նկարչությունը պատմում է երեխայի զարգացման ընթացքի, նրա հուզական, մտավոր, ֆիզիկական փորձառության մասին։ Մանկական նկարչությունը անցնում է զարգացման իր յուրահատուկ փուլերը, որոնք համամարդկային և համընդհանուր են, իսկ այդ փուլերից շեղումները կարող են հուշել երեխայի զարգացման բնականոն խաթարումների մասին։

Մանկական նկարներում յուրահատուկ կերպով արտացոլվում է երեխայի հոգեբանական զարգացումը։ Օրինակ կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները կոնկրետ բաներ դեռ չեն նկարում, նրանք չունեն դրա համար ֆիզիկական, մտավոր համապատասխան ունակություններ։ Նրանք նկարում են պարզ, ոչ կոնկրետ պատկերներ, հիմնականում իզոլացված պատկերներ։ Այս տարիքում երեխաները չեն նկատում մի քանի մարդ, կամ մի քանի կենդանի մի նկարում։ Նման իզոլացվածությունը ոչ թե երեխաների միայնության նշան է, այլ այդ տարիքին հատուկ դրսևորում է։ Իսկ նախակրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխան արդեն սկսում է նկարել մարդկանց։

Մանկական նկարները երկար ժամանակ է ինչ հետաքրքրում են հոգեբաններին, քանի որ դրանք հանդիսանում են երեխայի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջոց։ Կան հատուկ մշակված բազմաթիվ թեստեր, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել այս կամ այն անհատական առանձնահատկությունը նկարչության միջոցով։

Մեր առօրյա կյանքում ակնհայտ է, որ երեխաները շատ են սիրում նկարել: Նրանց համար նկարչությունը յուրահատուկ լեզու է: Բոլոր երեխաները ունեն նկարելու ձգտում. դա նրանց համար ոչ թե արվեստ է, այլ խոսք:

Նկարչության միջոցով երեխան կարողանում է արտահայտվել, այն ինքնաբուխ է, չի պահանջում կամային և ինտելեկտուալ ջանքեր:

Այն իր բնույթով նման է խաղին և հետևաբար երեխայի համար արտահայտվելու, դրսևորվելու առավել հետաքրքիր, հաճելի և բնական տարբերակ է:

Երեխայի կողմից շրջապատի գիտակցումը ավելի արագ է տեղի ունենում քան բառապաշարի զարգացումը: Իսկ նկարչությունը առավել հեշտ տարբերակ է արտահայտելու այն ինչ երեխան գիտի իր շրջապատի մասին, այն ինչ զգում է: Այսինքն նկարչությունը լրացնում է բացակայող բառերը, լրացնում է խոսքը: Բացի դա նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի համար: Կապված լինելով ձեռքի աշխատանքի հետ՝ նկարչությունը ձեռքը վերածում է խոսքի օրգանի: Նկարչությունը զարգացնող դեր ունի նաև տեսողության, շարժողական համակարգի, խոսքի, մտածողության, երևակայության համար: Այն նաև համաձայնեցնում է միջկիսագնդային փոխազդեցությունը:

Այսպիսով մանկական նկարները մասնագետների համար կարող են ծառայել որպես ախտորոշիչ և թերապևտիկ միջոց, իսկ առօրյա կյանքում նկարչությունն նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը: Մանկական նկարները յուրահատուկ պատմություններ են երեխայի զարգացման, հուզական վիճակի, ընդհանուր հոգեբանական վիճակի մասին:

Խզբզոցի փուլ (1-3 տարեկան երեխաներ): Երեխաներին այս փուլում հետաքրքիր է նկարչության ֆիզիկական կողմը: Այս փուլում երեխան հաճույք է ստանում ստեղծագործական գործընթացից, իսկ արդյունքը նրան հետաքրքիր չէ:[3]

[3] Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում>>, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան: Կրթության ազգային ինստիտուտ 2017թ

Նախասխեմատիկ փուլ (3-4 տարեկան երեխաներ)։ Այս փուլում երեխաները սկսում են բացահայտել իրենց նկարած պատկերների և արտաքին աշխարհի առարկաների միջև նմանություններ և կապեր։ Երեխաները հաճախ նկարում են շրջաններ և գծեր, որոնք նմանեցնում են մարդկանց, կենդանիներին, կամ այլ առարկաների, որոնք իրենց շրջապատում են։

Երեխայի կյանքի առաջին տարիները ստեղծագործական հնարավորությունների զարգացման ամենաարդյունավետ տարիներն են։ Այդ հասակում ամենագործածական և արդյունավետ զբաղմունքը նկարչությունն է։ Նկարչությունն մի աշխարհ է, որտեղ խոսում է ձեռքը և լռում լեզուն։ Նկարչությունը ձեռքի շարժումներ են, որոնք թվում են ուղղակի շարժումներ, բայց դա էդպես չէ, ամեն մի շարժում մի գիծ գալիս է ներսից՝ տրամադրությունից, հոգեվիճակից։

Նկարչության միջոցով երեխաներն արտահայտում են իրենց ապրումները, հույզերն ու վախերը։ Նկարի և գույների միջոցով կարող ես նկարագրել երեխային։

2.2 Ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչություն

Այլընտրանքային նկարչությունը նկարչության ձև է, որը չունի սահմաններ և արգելքներ, որտեղ նկարչության գործիք է շրջապատում ցանկացած իր, և որը բացահայտում է երեխայի ներաշխարհը և զարգացնում երևակայությունը, մտածելու և ստեղծագործելու ունակությունը։

Այլընտրանքային նկարչությունը երեխաների մտավոր, հուզագեղագիտական և կամային զարգացման միջոց է համարվում։

Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը մանկական երևակայության նոր շրջանակներ է բացում։ Այն հետաքրքրաշարժ գործընթաց է, որը հիացնում է երեխային։ Պետք է հաշվի առնել, որ երեխայի համար շատ կարևոր դեր է խաղում զարգացնող միջավայրը։ Միայն վրձինով նկարելը կարող է ձանձրալի լինել երեխայի համար։ Անսովոր նյութերն ու օրգինալ տեխնիկան երեխաներին

գրավում են նրանով, որ այստեղ չկա <<չի կարելի>> բառը, կարող են նկարել այն ինչ ուզում են, ինչպես ուզում են: Երեխաները ապրում են անմոռանալի դրական էմոցիաներ, իսկ զգացմունքներով կարելի է հասկանալ երեխայի տրամադրությունը:

Այլընտրանքային նկարչությունը նպաստում է մանկական վախերի վերացմանը, զարգացնում է ինքնավստահությունը, տարածական մտածողությունը: Այս ձևը սովորեցնում է երեխաներին ազատ արտահայտել իրենց մտքերը, դրդում է երեխաներին ստեղծագործական որոնումների և լուծումների: Ոչ ավանդական տեխնիկայով նկարելը սովորեցնում է երեխաներին աշխատել տարբեր նյութերի հետ: Այն զարգացնում է գունային ընկալման զգացումը, ձեռքերի նուրբ շարժունակությունը, ստեղծագործական ընդունակությունները:

Այլընտրանքային նկարչության ընթացքում կատարելագործվում են բոլոր հոգեկան գործընթացները՝ տեսողությունը, ընկալումը, պատկերացումը, հիշողությունը, երևակայությունը, մտածողականությունը:

Այլընտրանքային նկարչության տեսակները շատ են՝ մոնոտոպիա, նկարչություն մատներով, նկարչություն դրոշմելով, կլյաքսոգրաֆիա էնկաուստիկա, պուանտիլիզմ, ավազանկարչություն և այլն:

Մոնոտոպիա: Մոնոտոպիան այլընտրանքային նկարչության մի տեսակ է: Այն եզակի մանտնահետքերի տեխնիկան է, որի ժամանակ հարթ մակերևույթը կամ թուղթը ծածկում են ներկելով, իսկ հետո դրանով թողնում են մատնահետք թղթի վրա:

Աշխատանքի համար անհրաժեշտ է ջրրաներկ, վրձին, թուղթ և ջուր:

Նկարել որևէ իր (տանձ, խնձոր և այլն) այնուհետև մաքուր թուղթը դնել թաց նկարի վրա : Մի փոքր չորանալուց հետո զգուշությամբ հեռացնել թուղթը:

Կլյաքսոգրաֆիա: Փոքրիկ երեխաները սիրում են անհասկանալի նկարներ նկարել: Ծնողները շատ հաճախ ազատվում են դրանցից, այնինչ դրանցից կարելի է ստանալ հետաքրքիր և տարբերվող նկարներ:

Կլյաքսոգրաֆիան նպաստում է երեխայի զգաղմունքների իրազեկմանը, զարգացնում է նկարչական ճաշակը, ստեղծագործական ունակությունը։

Պուանտիլիզմ։ Բամբակե բարակ ձողիկները շատ լավ են համա-պատասխանում կետերով նկարելու համար։ Այս նկարչական տեխնիկան նպաստում է ոչ միայն երեխայի մանր մոտորիկայի զարգացմանը այլ նաև համբերությանը և ուշադրության կենտրոնացմանը։

Երբ աշնանը նկարում է ծառերը՝ տերևները դեղնացնելով, մենք տերևը կիրառում ենք որպես նկարչության միջոց։ Երեխաները տեսնում են, որ տերևը կարող են նկարել ոչ միայն տերևին նայելով, այլ անմիջապես տերևն օգտագործելով նկարչության մեջ։

Երեխաները շատ են սիրում ավազներով խաղալ, աշտարակ կամ ճանապարհ կառուցել։ Ավազով նկարչությունը զարգացնում է ձեռքի մոտորիկան, երեխան հանգստանում և խաղաղվում է։ Ավազով աշխատելիս սաները գիտեն, որ պատկերը միշտ կարելի է շտկել, նկարածը կարող են մաքրել և նոր պատկերներ նկարել։

Նկարչություն խոնավ թղթի վրա։ Նկարչական թուղթը նախապես խոնավեցնել (խոր թասի մեջ ջուր լցնել, նկարչական թուղթը մտցնել ջրի մեջ և արագ հանել)։ Խոնավ թղթի վրա կատարած աշխատանքներում սովորավար բացակայում է սյուժեն։

Պատկերների գույները սահուն անցում են կատարում, խառնվելով մյուս գույների հետ։ Խոնավ թղթի վրա նկարչության ընթացքում կարելի է դիտել գույների ստացման գործընթացը։

Մատներով կամ ձեռքի ափով նկարչություն։ Այս նկարչությունն ունի հետևյալ տեխնիկան։ Վրձնի փոխարեն օգտագործվում են երեխայի մատների ծայրը կամ ափը։ Երեխայի համար հարմար է նկարել առաջատար ձեռքի ցուցամատով։ Երբ ներկոտ մատիկը դիպչում է թղթին ստացվում են կլորավոր կետիկներ։ Իսկ երբ ներկոտ մատիկը շարժվում է թղթի վրա՝ աջից ձախ, կամ հակառակը, ստացվում են երկար կամ կարճ գծիկներ։ Այս տեխնիկայի համար

օգտագործվում են հատուկ ներկեր։ Կարելի է նաև օգտագործել ջրաներկ կամ գուաշ։ Ներկանյութը բացում են թթվասերի խտությամբ և լցնում հարմար պնակների մեջ։ Գույնը փոխելու դեպքում մատը լվանում են ջրամանի մեջ և չորացնում լաթով։

Նկարչություն դրոշակնիքով։ Նախապես պատրաստված դրոշմակնիքը ներկապատում են վրձինի միջոցով կամ պարզապես թաթախում են ներկանյութի մեջ։ Այնուհետև դրոշակնիքով սեղմում են թղի վրա թողնելով յուրահատուկ հետք։ Այն կարելի է ներկել մի քանի գույնով, պատկերը կստացվի ավելի վառ և բովանդակալից։ Այս տեխնիկայի միջոցով կարելի է ստանալ ցանկացած քանակի նույնանման պատկերներ։ Իբրև դրոշակնիք կարելի է օգտագործել մանր երկրաչափական մարմիններ, կամ պատրաստել բանջարեղեններից (կարտոֆիլ, գազար, սմբուկ և այլն), տերևներից, մրգերից, ստվարաթղթից և այլն։

Անսովոր նկարչություն։ Այն նպատակահարմար է անցկանցնել անհատապես։ Դա օգնում է երեխաներին հեշտ հարմարվել խմբում։

Նկարչություն սկուտեղի վրա (ալյուր, աղ, շաքարավազ, մանր հատիկավոր սերմեր)։ Սկուտեղի վրա լցնել որևէ վերոնշյալ մթերքի տեսակներից և նկարել տարատեսակ գծեր։ Եթե երեխայի համար այն դժվարություն է ներկայացնում, ապա կարելի է կիրառել համատեղ նկարչության մեթոդը։ Այնուհետև աստիճանաբար ուղղորդել երեխային դեպի ինքնուրույն գործունեության։[4]

Երեխաները շատ են սիրում անակնկալներ, իսկ մոմանկարչությունը անակնկալ նկարչություն է. նկարելու ընթացքում երեխան չի տեսնում նկարը, չի պատկերացնում իր նկարածը, որովհետև նկարում է մոմով սպիտակ թղթի վրա։ Վերջում թուղթը գունավորելուց հետո երևում է նկարը (մոմով նկարված հատվածները չեն ներկվում)։

[4] Լ. Սմբատյան, Լ. Վարդանյան, Լ. Սարգսյան <<Կերպարվեստի պարապմունքներ>>, Կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար, Ուսումնամեթոդական ձեռնարկ

Այլընտրանքային նկարչության մեջ լայնորեն կիրառվում է փայլաթիթեղով նկարչությունը: Երեխային դուր է գալիս փայլաթիթեղով նկարելու տեխնիկան:

Այս նկարչության միջոցով երեխաները տեսնում են թղթի և փայլաթիթեղի տարբերությունները, ինչպես է ներկը տարածվում փայլաթիթեղի և ինչպես թղթի վրա: Փայլաթիթեղի վրա ներկը չի ներծծվում, իսկ թղթի վրա արագ ներծծվում է: Փայլաթիթեղով աշխատելու տեխնիկան հետևյալն է: Օրինակ՝ եթե երեխան ցանկանում է նկարել աշնանային ծառ, ապա նախ վրձնով նկարում է ծառը ճյուղերով, որից հետո փայլաթիթեղի որոշակի հատված կլորացնում է ձեռքի ափով, մտցնում ոչ շատ ջրիկ նախապես բացված գույնի մեջ (դեղին, կարմիր) և սեղմելով փայլաթիթեղով ծառի վրա ստանում գեղեցիկ աշնանային գուներանգներ:

Այլընտրանքային նկարչությունը յուրահատուկ նկարչություն է, որը հնարավորություն է տալիս երեխային ազատ աշխատելու զարգացնելով երեխայի երևակայությունը, հնարամտությունը ստեղծագործելու ունակությունը:

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը՝ եկանք այն եզրակացության, որ կերպարվեստային գործունեությունը իր ուրույն տեղն է գրավում նախադպրոցականի կյանքում: Այն զարգացնում և ձևավորում է երեխայի գեղագիտական ճաշակը, հանգստացնում և հաճույք պատճառում նրան: Նպաստում է մանր մոտորիկայի զարգացմանը, որը առողջ և կապակցված խոսքի գրավականն է հանդիսանում:

Կերպարվեստային գործունեությունը երեխայի մոտ ձևավորում է նաև իրական երևույթների ու առարկաների նկատմամբ հուզա-զգայական վերաբերմունք, զարգացնում գեղարվեստաստեղծագործա-կան ունակությունները:

Կերպարվեստային գործունեության տեսակներից հատկապես նկարչությունն իր ենթատեսակներով դրական ազդեցություն է ունենում երեխայի ընդհանուր զարգացման գործընթացում:

Նկարչության միջոցով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները ինչպիսիք են երևակայությունը, մտածողությունը, հիշողությունը, ընկալումը:

Նկարչական գործունեությունը նաև խթանում է երեխայի իմացական, շարժողական և հուզական ոլորտների զարգացումը:

Այսօր ժամանակակից նախադպրոցական պրակտիկայում հաջողությամբ իրագործվում են կերպարվեստային պարապմունքների ավանդական և ոչ ավանդական ձևերը: Հատկապես առաջընթաց է ապրում ոչ ավանդական կամ այլընտրանքային նկարչությունը:

Այլընտրանքային նկարչությունը մանկական երևակայության նոր շրջանակներ է բացում: Ոչ ավանդական տեխնկիայով նկարելը հետաքրքրաշարժ գործընթաց է, որը գրավում է երեխային:

Միայն վրձինով նկարելը ձանձրացնում է երեխային, իսկ անսովոր նյութերն ու օրիգինալ տեխնիկան գրավում է նրանով, որ այստեղ սահմաններ չկան և երեխաները կարող են նկարել ինչպես ուզում են։

Այլընտրանքային տեխնիկայով նկարելը սովորեցնում է երեխային աշխատել տարբեր նյութերով, որը երեխայի համար ոչ միայն հետաքրքիր ու հաճելի է, այլև աշխատելիս երեխան մեծ բավականություն ու գեղագիտական մեծ հաճույք է ստանում։

Այսպիսով այլընտրանքային նկարչությունը օգնում է երեխային գործել ազատ, ինքնուրույն ու ինքնավստահ։

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Սմբատյան, Լ. Վարդանյան, Լ. Սարգսյան <<Կերպարվեստի պարապմունքներ>>, Կրտսեր առաջին և կրտսեր երկրորդ խմբերի համար, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան։ Կրթության ազգային ինստիտուտ 2015թ՝224 էջ
2. Լ. Սմբատյան, Լ. Սարգսյան <<Կերպարվեստի պարապմունքների կազմակերպումը մանկապարտեզի միջին խմբում>>, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան։ Կրթության ազգային ինստիտուտ 2017թ՝160 էջ
3. Ս. Ա. Մարուքյան, Ա. Ս. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Բուհական դասագիրք Երևան։ <<Գասպրինտ>> 2008, 288 էջ